

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍՆԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴԵԿԱԿԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
I ԿԻՍԱՍՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

-Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով 112 անգամ հանդես են եկել տարբեր միջնորդություններով կադաստրի տարածքային ստորաբաժանմունքում, նոտարական գրասենյակում, ոստիկանության բաժանմունքներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում և այլ կազմակերպություններում:

-Փաստաթղթերի պատճեններ, քաղվացքներ, տեղեկանքներ են տրամադրել համայնքի 205 բնակիչների: Օժանդակել են գյուղացիական տնտեսություններին բանկերից ֆինանսական կազմակերպություններից գյուղատնտեսական վարկեր ստանալու նպատակով: Արձակել են 1 կարգադրություն, ընդունել 28 որոշում, հրավիրել և վարել են համայնքի ավագանու 6 նիստ:

-Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի 2 ընտանիքների ընտանեկան նպաստի համակարգում փաստագրման աշխատանքները, ինչպես նաև ազգաբնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառման աշխատանքները:

-Հրավիրել են «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 1 նիստ, քննարկվել են համայնքի անապահով և ծնողազուրկ երեխաների իրավունքների պաշտպանության, դաստիարակության, ուսման հետ կապված հարցեր, տրամադրվել է դրամական օգնություն:

-Կատարել են համայնքի բնակիչ հանդիսացող 84 անձանց ընդունելություն, քննարկել բոլոր դիմումները, բողոքները, առաջարկությունները, որոնցից 65-ին տրվել է դրական լուծում:

Ֆինանսների բնագավառում

-Աշխատակազմի միջոցով կազմել և ավագանու նիստի հաստատմանն են ներկայացրել Երասխահուն համայնքի 2014 թվականի ֆինանսական տարվա բյուջեի նախագիծը, ինչպես նաև աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու համար:

Ապահովել են բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը, տնօրինել բյուջեի միջոցները՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

-Կազմակերպել և աշխատակազմի միջոցով իրականացրել են 1 կիսամյակի կտրվածքով նախատեսված.

.գույքահարկի գանձումը 1396 000 դրամ, 93 %-ով
հողի հարկի գանձումը 873 000 դրամ, 12 %-ով
վարձակալական հողի վարձը 80 000 դրամ, 55%-ով
Խմելաջրի վարձ 600 000 դրամ 29 %-ով

Պաշտպանության բնագավառում

- Աջակցել են գարնանային գորակոչին, զինկոմիսարիատից ստացված 10 ծանուցագրերը հանձնվել է գորակոչիկներին, ապահովել նրանց ներկայանալը զինկոմիսարիատ, որոնցից 6 մեկնել են ժամկետային ծառայության: Աշխատանքներ են տարվել հետախուզման մեջ գտնվող 4 գորակոչիկների գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, որպիսզի ոչ ոք չխուսափի զինվորական ծառայությունից:

-Կազմակերպել և անցկացրել ենք համայնքի ազգաբնակչության 1 սեմինար դասընթաց և 1 գործնական վարժանք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի արտակարգ իրավիճակներում բնակչության տեղահանման սխեմայի սահմաններում: Համապատասխան

ջուկատուերի և օղակուերի կազմերը, անցկացվել է ասորաժեշտ տրասսպորտայրս, և այլ նյութական պարագաների տեխնոման և ստուգման աշխատանքները:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

-Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն են ներկայացրել համայնքի հողերի օգտագործման, գոտիավորման սխեմաներն ու համայնքի գլխավոր հատակագիծը:

-Համայնքի ավագանու սահմանված կարգով և սահմանված վարձավճարներին համապատասխան որոշումներ են կայացրել համայնքի սեփականություն հանդիսացող 9 հա. գյուղնշանակության վարելահողը վարձակալությամբ հատկացնելու մասին, մրցույթում հաղթող ճանաչված բնակիչների հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր:

Կազմել են համայնքի 2014 թվականի հողային հաշվեկշիռը , ճշգրտել և ներկայացրել Արմավիրի կադաստրի տարածքային ստորաբաժանում և վիճակագրական գործակալություն :

Կոմունալ տնտեսության և բարեկեցության բնագավառում

-Համայնքի միջոցների հաշվին ամիսը 3 անգամ կատարվել է համայնքի տարածքի աղբահեռացման աշխատանքները, հնարավորինս բարեկարգվել են բավականին թվով փողոցներ, մի քանիսը ավագապատվել են:

-Կատարել ենք համայնքի խմելաջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ամենօրյա վերահսկողություն է իրականացվում խմելաջրի նպատակային օգտագործմանը և խնայողությանը:

-Վարձել են գյուղի գերեզմանատան պահակ, որը միաժամանակ իրականացնում է մաքրման և բարեկարգման աշխատանքները, լուծված է խմելաջրի և լուսավորման հարցը: Աջակցություն են ցուցաբերել համայնքում գազաֆիկացման աշխատանքները կատարելիս, այս կիսամյակում գազաֆիկացվել է ևս 3 առանձնատուն:

Տրանսպորտի և կապի բնագավառում

Ապահովել են «Վիվա Սել-USU» ընկերության շարժական գրասենյակի պարբերաբար այցելումը համայնք, որը տեղում տարաբնույթ ծառայություններ է մատուցում բաժանորդներին, հեռախոսա-համարների փաթեթային համակարգում ընդգրկել ենք ևս 20 բնակիչների, որի սակագինը 8 անգամ էժան է սովորականից:

-Օժանդակել ենք համայնքում առկա տրակտորների և այլ գյուղտեխնիկայի վերանորոգման աշխատանքներին, որպեսզի գարնանային գյուղատնտեսական աշխատանքները իրականացվեն ժամանակին: Համայնքի միջոցների հաշվին վերանորոգել ենք համայնքային ենթակառուցվածքի 2 կմ երկարությամբ ավտոմոբիլային ճանապարհ

Առևտրի և սպասարկման բնագավառում

-Աշխատակազմի միջոցով մշակել և ավագանու հաստատմանն են ներկայացրել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային գործունեության կանոնները:

-Տրվել է ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի 2 թույլտվություն, իրականացրել ենք համայնքում գործող առևտրի կետերի ստուգման աշխատանքները, կազմել համապատասխան արձանագրություններն ու տեղեկանքները:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում

-Մշտական օժանդակություն ենք ցուցաբերել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներին հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու, կանխելու նպատակով:

-Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ մշակել և իրականացրել ենք միջոցառումներ հատկապես երիտասարդների մոտ գողության, խուլիգանության, թմրամոլության և այլ տեսակի իրավախախտումների կանխարգելման նպատակով:

Պարբերաբար ոստիկանության աշխատակիցներից տեղեկություններ ենք ստացել համայնքում կատարվող իրավախախտումների վերաբերյալ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ: Համայնքը սպասարկող ոստիկանության աշխատակցին տրամադրել ենք աշխատասենյակ, ամենօրյա հաշվետվություն ենք ստանում նրանից համայնքի օպերատիվ իրավիճակի մասին, համատեղ ձեռնարկում կանխարկելիչ միջոցառումներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում
-Համայնքի երիտասարդների համար 1 անգամ կազմակերպել ենք համերգ- միջոցառում, տրամադրել համերգի տոմսերը:

Համայնքի միջոցների հաշվին ստեղծել ենք հայկական ժողովրդական և ազգագրական պարի խմբակ, որտեղ սովորում են համայնքի շուրջ 33 երեխաներ: Արմավիրի մարզպետի աջակցությամբ ձեռնամուխ ենք եղել համայնքի միջնակարգ դպրոցի ներքին հարդարման և վերանորոգման աշխատանքներին, սակայն դասասենյակները և լաբորատորիան դեռևս կահավորման և համալրման կարիք ունեն նոր գույքով:

Աջակցել ենք միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, դպրոց հաճախելուց խուսափող երեխաների և նրանց ծնողների հետ տարել բացատրական աշխատանքներ, հետևել ուսման որակի և կրթամակարդակի բարձրացմանը: Նախորոք կազմել ենք շրջանավարտների անձնագրավորման գործերը և վերջին զանգի հանդեսի ժամանակ հանձնել անձնագրերը, օժանդակել վերջին զանգի հանդեսի պատշաճ անցկացմանը: Մասնակցություն ենք ցուցաբերել մայիսի 28-ին Մարդարապատում անցկացվող տոնի միջոցառմանը:

Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում


-Օժանդակել ենք համայնքի բուժկետի բնականոն գործունեությանը, լուծել էլեկտրաէներգիայի և ջեռուցման խնդիրները, բնակիչները ստանում են որակյալ մատչելի բուժօգնություն: Կազմակերպել արևելյան մարտարվեստի պարապմունքներ շուրջ 20 պատանիների համար, որոնցից շատերը մարզային, հանրապետական մրցաշարերում գրավել են մրցանակային տեղեր և իմ կողմից արժանացել դրամական խրախուսանքի:

Գյուղատնտեսության բնագավառում

-Աշխատակազմի միջոցով աջակցել են համայնքի բոլոր հողօգտագործող տնտեսություններին շուրջ 280 հա. ցանքատարածությունների վրա գարնանային գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելիս, մասնավորապես սերմացուների, պարարտանյութի, թունաքիմիկատների մատակարարման գործում, գյուղտեխնիկայով ապահովելու հարցում: Կատարել ենք համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների սեռա-տարիքային հաշվառման, ինչպես նաև նրանց պրոֆիլակտիկ բուժման և վակցինացման աշխատանքները: Հողագործությամբ զբաղվող մենատնտեսների համար կազմակերպել են դասընթացներ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ «Հայաստան» գրասենյակի կողմից ֆինանսավորվող «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում, և 10 մենատնտես ստացել են որակյալ ուսուցում և վկայական:

Լայնածավալ միջոցառումներ ենք իրականացրել մարտի 30-ին համայնքում ցրտահարությունից տուժած տնային տնտեսություններին այգեգործներին օժանդակություն ցուցաբերելու հարցում, ցրտահարության հետևանքները մեղմացնելու, վնասը հաշվարկելու, սերմացուներ նպարատանյութ տրամադրելու ուղղությամբ:

16.07.2014թ.

Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի
ղեկավար՝  Արմեն Ավետիսյան



Արմավիրի մարզի Երասխահուն
համայնքի ղեկավարի
2014թվականի I կիսամյակի
Աշխատանքային գործունեության
հաշվետու ժողովի

Արձանագրություն

16. 07. 2014թ.

գ. Երասխահուն

2014թ-ի հուլիսի 16-ին ժամը 13-00-ին կայացավ Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ղեկավարի 2014թ-ի I կիսամյակային աշխատանքային գործունեության հաշվետու ժողովը, մասնակցությամբ ավագանու 6 անդամների, համայնքի ղեկավարի աշխատակազմի 11 աշխատակիցների, համայնքի 75 բնակիչների, միջնակարգ դպրոցի տնօրենի և 11 ուսուցիչների, մարզպետարանի ներկայացուցիչ Հովհաննես Հարությունյանի
Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանի
Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Մ. Գալստյանի

Օրակարգում

- 1.Երասխահուն համայնքի ղեկավարի 2014թ-ի I կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվություն: (Զեկ. համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյան)
- 2.Երասխահուն համայնքի հիմնախնդիրների մասին (Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյան)

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ

Լսեցին - Երասխահուն համայնքի ղեկավարի 2014թ-ի I կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվությունը հարցը:
(Զեկ. համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյան)

Պարոն Ավետիսյանը ժողովի մասնակիցներին մանրամասնորեն զեկուցեց 2014թ-ի I կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին - Երասխահուն համայնքի հիմնախնդիրների մասին հարցի շուրջ համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի զեկույցը:
Պարոն Ավետիսյանը ներկայացրեց համայնքի հիմնական կարևոր խնդիրները, որոնք ամենից շատ են մտահոգում թե իրեն և թե համայնքի բնակչությանը, սակայն համայնքի բյուջեի սուղ միջոցներով հնարավոր չէ լուծել այսպիսի բարդ խնդիրներ: Այդ ծրագրերն ու նախագծերը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է մարզպետարանի աջակցությունը՝ ի դեմս Արմավիրի մարզպետ Պարոն Ա. Ղաիրամանյանի, ՀՀ կառավարության, միջազգային բանկի, <<ՕԻԳ>>-ի և այլ դոնոր կազմակերպությունների մասնակցությունը:

Ելույթ ունեցան - համայնքի բնակիչներ Գ. Բուդադյանը, Ջ. Մովսիսյանը
Ս. Մուրադյանը, Ս. Կարապետյանը, Ղ. Փանոսյանը Շ. Գալստյան, Ն. Մելքոնյանը, Զ.
Գևորգյանը, Խ. Թամոյանը, Խ. Ավդոյանը, Ա. Հակոբյանը, Ս. Կարապետյանը Ս.
Գալստյանը և ուրիշներ:

Նրանք շնորհակալություն հայտնեցին համայնքում խմելաջրի հարցը լուծելու
համար, միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման համար, ինչպես նաև ոռոգման
համակարգում կատարվող մեծամասշտաբ բարեփոխումների և հորատվող
խորքային հորերի համար, որի շնորհիվ համայնքի ջրօգտագործողները այլևս չեն
ունենա ոռոգման ջրի խնդիր: Բայց միևնույն ժամանակ դժգոհություն հայտնեցին
համայնքում մշակույթի օջախի, մանկապարտեզի, խաղասենյակի իսպառ
բացակայության համար:

Ավագանու անդամները իրենց ելույթներում շատ կարևորեցին համայնքում
կուլտուրայի տուն չլինելու հանգամանքը, և համայնքի բնակիչները աշխատանքից
ազատ ժամերին չունեն ժամանցի հնարավորություն, նրանք առաջարկեցին
կառուցել գոնե մեկ խաղասենյակ թոշակատուների համար: Նրանք կարևորեցին
նաև համայնքի գյուղապետարանի շենքի ընդլայնման և հիմնանորոգման խնդիրը,
քանի որ ներկայումս շենքի հնարավորությունները չեն նպաստում ավագանու և
հանձնաժողովների բնականոն գործունեություն ծավալելուն, ավագանին չունի
առանձին աշխատասենյակ, ինչպես նաև համայնքային ոստիկանությունը:

Համայնքի հիմնախնդիրները

1. Համայնքում չկա մշակույթի օջախ, կուլտուրայի տան շենքի կառուցումը
դադարեցվել է 1988թ-ից և մինչև հիմա էլ այն կիսակառույց վիճակում է:
2. Համայնքում չկա մանկապարտեզ, մանկապարտեզի շենք ընդհանրապես չի
եղել, որը շատ անհրաժեշտ է երեխաներին նախադպրոցական գիտելիքներ
ստանալու, ծնողների հոգսը թեթևացնելու համար:

3. Համայնքի գյուղապետարանի շենքի ընդլայնում և հիմնանորոգում:
4. Ներտնտեսային ոռոգման ցանցի ջրատարների վերանորոգում: Անհրաժեշտ է
հողաշերտ ջրատարերը կառուցապատել բետոնե կիսախողովակներով շուրջ 8 կմ
ընդհանուր երկարությամբ, որպեսզի չլինի ոռոգման ջրի կորուստ և ջուրը արագ
մատակարարվի ջրօգտագործողներին:

5. Համայնքում դեռևս կա ոռոգման ջրի պակասություն, անհրաժեշտ է հորատել ևս 4
խորքային հոր, որպեսզի բավարարվի ջրօգտագործողների պահանջը:

Ժողովի վերջում եզրափակիչ խոսքով հանդես եկան համայնքի ղեկավար
Արմեն Ավետիսյանը և մարզպետարանի ներկայացուցիչ Հովհաննես
Հարությունյանը և ներկաներին հավաստիացրին, որ բարձրացված բոլոր
հարցերին և խնդիրներին լուծում տալու համար միջնորդությամբ հանդես կգան
Արմավիրի մարզպետարանում, «ԾԻԳ»-ի տարբեր գրասենյակներում և այլ
համապատասխան կազմակերպություններում, բարձրացված հարցերին դրական
լուծում տալու ակնկալիքով:

Պարոն Ավետիսյանը ընդգծեց նաև, որ ինքը որոշ հարցերի վերաբերյալ
նախնական աշխատանքներ արդեն կատարել է, նախագծերը գտնվում են
ուսումնասիրման և գնահատման փուլում:

Ժողովի նախագահ

Քարտուղար



Արմեն Ավետիսյան 2014թ. հոկտի 16

գ.Երասխահուն

Մարզպար Գալստյան